

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ «9 ՔԱՅԼԵՐԻ» ՄՈԴԵԼ

Ընտանեկան ճգնաժամային միջամտության այս մոդելը, որը բաղկացած է 9 քայլերից, բավականին բազմակողմանի մոտեցում է ենթադրում: Դիտարկենք քայլերից յուրաքանչյուրը:

⇒ Քայլ 1

Կառուցողական կապի արագ ձևավորում

Շատ կարևոր է ձևավորել կապ (ռապորտ) հաստատել ընտանիքի անդամների հետ: Այդ նպատակին հասնելու համար օգտակար է՝ ընտանիքի անդամների անվերապահ, առանց նախապայմանների ընդունումը, նրանց զգացմունքների և կյանքի հանգամանքների հանդեպ հարգանքն ու նրբանկատ մոտեցումը, անկեղծությունը, ակտիվ լսելու կարողությունը:

⇒ Քայլ 2

Բացասական զգացմունքների ու հույզերի արտահայտման խրախուսում

Շատ կարևոր է օգնել ընտանիքի անդամներին արտահայտել ճգնաժամի հետ կապված բացասական հույզերը՝ բարկությունը, հիասթափությունը, տխրությունը, մեղքի զգացումը, ամոթի զգացումը, հուսահատությունը և այլն:

⇒ Քայլ 3

Հրահրող իրադարձության քննարկում

Այս փուլում քննարկվում են հետևյալ հարցերը.

- ինչպե՞ս է ընտանիքն ընկալում իրավիճակը, այն, թե ինչ է տեղի ունեցել,
- այն իրադարձությունների շղթան, որը հանգեցրել է ճգնաժամի առաջացմանը,
- ո՞րն էր խնդիրը, որը սկիզբ հանդիսացավ այդ իրադարձությունների շղթայի համար,
- ե՞րբ և ինչպե՞ս առաջացավ ճգնաժամը,
- ի՞նչ նպաստող հանգամանքներ կային,
- ինչպե՞ս է ընտանիքը փորձել հաղթահարել ճգնաժամը և այլն:

⇒ Քայլ 4

Ուժեղ կողմերի և կարիքների գնահատում

Այս փուլում գնահատվում են ընտանիքի հիմնական կարիքներն ու զարգացման ենթակա կողմերը: Սակայն պակաս կարևոր չէ ընտանիքի ուժեղ կողմերի և ռեսուրսների, հաղթահարման պոտենցիալի գնահատումը, որոնք օգտագործվում են ինքնագնահատականի բարձրացման և խնդիրների լուծման հմտությունների զարգացման համար:

⇒ Քայլ 5

Դիմամիկ բացատրության ձևակերպում

Եթե երրորդ քայլում քննարկվում էր ընտանիքի ընկալումն այն մասին, թե ինչ է տեղի ունեցել, այս փուլում քննարկվում են տեղի ունեցածի պատճառները, այն, թե ինչու է դա տեղի ունեցել: Ուսումնասիրվում է ընտանիքի ընկալումը ճգնաժամի նշանակության և դրա նախադրյալների վերաբերյալ:

⇒ Քայլ 6

Կոգնիտիվ գործառնությունների վերականգնում

Այս փուլում աջակցող մասնագետն օգնում է ընտանիքին որոշել ճգնաժամի լուծման տարբերակները, խելամիտ լուծումները, որոնց ուղղությամբ ընտանիքը մոտիվացված է աշխատել:

⇒ Քայլ 7**Բուժման պլանավորում և իրականացում**

Ձևակերպվում են կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներ, գործողություններ ու քայլեր, որոնք ընտանիքն ընտրում է որպես առաջնահերթություն: Կոնկրետ պլանի առկայությունը մեղմում է ընտանիքի անօգնականության զգացումը, տալիս է որոշակի վերահսկողության զգացում և կոնկրետ գործողությունների վրա կենտրոնանալու հնարավորություն: Ընտրված նպատակներն ու գործողությունները պետք է լինեն պարզ, որպեսզի ապահովեն ընտանիքի հաջողությունը: Ընտանիքն է պատասխանատվություն կրում այս գործողությունների ու քայլերի իրականացման համար, սակայն ճգնաժամային միջավայրում ցուցաբերող անձը շարունակում է փնտրել նոր ռեսուրսներ ու հնարավորություններ և, կարծես, հանդես է գալիս ընտանիքի «պաշտպանի» դերում:

⇒ Քայլ 9**Դինամիկ բացատրության ձևակերպում**

ճգնաժամային միջավայրում ցուցաբերող անձը պայմանավորվում է ընտանիքի հետ հետագա հաղորդակցման մասին: Օրինակ՝ նա կարող է ասել. «Ես կապ կհաստատեմ Ձեզ հետ մեկ շաբաթից»: Սա օգնում և, լավ առումով, պարտավորեցնում է ընտանիքին շարունակել աշխատել ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ: Գնաժամային միջավայրում այս մոդելի տևողությունը մեծ չէ, այն կենտրոնացած է «այստեղ և հիմա» սկզբունքի վրա և աջակցում է ընտանիքի անդամներին փոխելու այն, ինչ իրենք են ցանկանում:

⇒ Քայլ 8**Գործողությունների ավարտ**

Գործողությունների ավարտը դիտարկում ենք այն ժամանակ, երբ ընտանիքը հասնում է կայունության նախաճգնաժամային մակարդակին: Քննարկվում են սադրող իրադարձությունները, դրանց նկատմամբ հակազդումները, ինչպես նաև նոր ծեռք բերված հմտությունների կիրառման հնարավորություններն ապագայում: Այս փուլում կարևոր է նաև վստահ լինել, որ ընտանիքը կոնտակտի մեջ է բոլոր համայնքային ծառայությունների հետ, ծեռք է բերել անհրաժեշտ պայմանավորվածությունները աջակցող մասնագետների հետ: